600.0002.10.01.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունվարի 2018 թվականի №2Ա
քաղ. Երևան

«ԴՈՒԲՐՈՎԿԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ №9/1-11 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ԴՈՒԲՐՈՎԿԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) որ «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2003 թվականի հոկտեմբերի 29-ին «ԴՈՒԲՐՈՎԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրվել է №9/1-11 թույլտվությունը, որը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2010 թվականի սեպտեմբերի 1-ի №465Ա որոշմամբ երկարաձգվել և շարադրվել է նոր խմբագրությամբ (ռադիոհաճախականության օգտագործման №0835 թույլտվություն),

բ) Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 29-ի №347Ա որոշումը, որով ընկերությունը պարտավորեցվել է մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 388 450 (երեք հարյուր ութսունութ հազար չորս հարյուր հիսուն) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

գ) որ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հունվարի 9-ի վճռով ընկերությունը սնանկ է ճանաչվել, և նույն դատարանի 2017 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ ընկերության նկատմամբ սկսվել է լուծարման վարույթ,

դ) ընկերության սնանկության գործով կառավարչի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի (Հանձնաժողովում մուտքագրվել է դեկտեմբերի 21-ին)՝ ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ գրությունը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 47-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել՝
   1) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2003 թվականի հոկտեմբերի 29-ին «ԴՈՒԲՐՈՎԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված ռադիոէլեկտրոնային միջոցների տեղադրման համար ռադիոհաճախություններ հատկացման №9/1-11 թույլտվությունը,
   2) Հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 1-ի «ԴՈՒԲՐՈՎԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված №9/1-11 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №465Ա որոշումը,
   3) Հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 11-ի «ԴՈՒԲՐՈՎԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և հաշվարկված տույժերի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցումը պարտավորեցնելու մասին» №173Ա որոշումը,
   4) Հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 12-ի «ԴՈՒԲՐՈՎԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և հաշվարկված տույժերի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցումը պարտավորեցնելու մասին» №282Ա որոշումը:

2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում 900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով 2016 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 21-ը հաշվարկված 256 322 (երկու հարյուր հիսունվեց հազար երեք հարյուր քսաներկու) դրամ պարտքը:

3. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է՝

   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.

   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի դեկտեմբերի 21-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
10 հունվարի 2018 թ.